

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումը	Միջոցառումների կատարման արդյունքը
1	2	3	4
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	68	«Հայաստանի Հանրապետությունում տավարի մսի արտադրության ծավալների ավելացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի մայիսի 8-ի N ՄԿ/10.1/2308-13 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում տավարի մսի արտադրության ծավալների ավելացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Դրան հաջորդել է ՀՀ վարչապետի 2013 թվականի մայիսի 23-ի N 02/23.8/7091-13 հանձնարարականը՝ նախագիծը մեկ անգամ ևս ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ քննարկելու և ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համաձայնեցնելու վերաբերյալ և

			<p>վերջնաժամկետ էր սահմանվել 2013 թվականի հունիսի 14-ը: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից վերոհիշյալ գերատեսչությունների առաջարկությունների հիման վրա նախագիծը լրամշակվել է և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի հունիսի 12-ի N ՄԿ/ԱՀ-1/3008-13 գրությամբ սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: ՀՀ վարչապետի 2013 թվականի հուլիսի 23-ի N 02/23.8/10740-13 հանձնարարականով պահանջվել է ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության եզրակացության հիման վրա լրամշակել նախագիծը: Որոշման նախագծի լրամշակված տարբերակը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի օգոստոսի 13-ի N ՄԿ/ԱՀ-1/4202-13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն: Այնուհետև, ՀՀ վարչապետի 2013 թվականի սեպտեմբերի 27-ի N 02/23.8/14571 և ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի նիստի N 01/23.7/[170772]-13 արձանագրության հանձնարարականներով պահանջվել է լրամշակել նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից տրված եզրակացության հիման վրա և համաձայնեցնել այն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ: Որոշման լրամշակված նախագիծը ՀՀ գյու-</p>
--	--	--	---

			<p>ղատնտեսության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 17-ի N ՍԿ/ԱՀ-1/5545-13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն: Այնուհետև ՀՀ վարչապետի հանձնարարությամբ՝ Սշտապետ գործող ֆինանսատնտեսագիտական նախարարական կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 21-ի N 23.16/178214-13 արձանագրության 5-րդ կետի հանձնարարականին համապատասխան նախագիծը լրամշակվել և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N ՍԿ/ԱՀ-1/6585-13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:</p>
<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>69</p>	<p>«Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսություններում ջերմոցային տնտեսության խթանման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>«Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսություններում ջերմոցային տնտեսության խթանման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը մշակվել և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի օգոստոսի 24-ի համապատասխան գրություններով ներկայացվել է ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ ֆինանսների, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, ՀՀ բնապահպանության և ՀՀ արդարադատության նախարարություններ, ինչպես նաև ՀՀ հանրային խորհուրդ և ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն՝ կարծիքի: 2013 թվականի հունիսի 10-ի N ՍԿ/ԳՀ.1/2903-13 գրությամբ շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքներն ամփոփվել և նախագծի լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարություն:</p>

			<p>Այնուհետև, ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 24-ի N 02/23.8/8991-13 հանձնարարականով պահանջվել է սահմանված կարգով ապահովել բոլոր շահագրգիռ մարմինների կարծիքները:</p> <p>Շահագրգիռ մարմինների կարծիքներն ամփոփելուց հետո ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի հուլիսի 4-ի N ՍԿ/ԳՀ-1/3460-13 գրությամբ նախագծի լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարություն:</p> <p>Դրան հետևել է ՀՀ վարչապետի 2013 թվականի հուլիսի 22-ի N 02/23.8/10579-13 հանձնարարականը, համաձայն որի մեկ անգամ ևս նախագիծը քննարկել ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների և ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական Արամ Ղարիբյանի հետ, ինչպես նաև ապահովել ՀՀ կենտրոնական բանկի կարծիքը: Համապատասխան կարծիքներն ստանալուց և ամփոփելուց հետո ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի օգոստոսի 5-ի N ՍԿ/ԳՀ-1/4063-13 գրությամբ որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն:</p> <p>Այնուհետև ՀՀ վարչապետի 2013 թվականի օգոստոսի 23-ի N 02/23.8/12580-13 հանձնարարականի համաձայն պահանջվել է նախագիծը մեկ անգամ ևս քննարկել շահագրգիռ մարմինների հետ և ներկայացնել փոփոխանալիս ներկայացված տարբերակ: Որոշման նախագիծը</p>
--	--	--	---

			<p>ներկայացվել է կարծիքի ՀՀ ֆինանսների, ՀՀ արդարադատության, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, ՀՀ կրթության և գիտության նախարարություններ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ հանրային խորհուրդ և ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն: Կարծիքներն ստանալուց և ամփոփելուց հետո որոշման նախագծի լրամշակված տարբերակը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի N ՍԿ/ԳՀ-1/4824-13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն: ՀՀ վարչապետի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի N 02/23.8/14713-13 հանձնարարականով պահանջվել է եռօրյա ժամկետում ապահովել նախագծի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության եզրակացությունը: ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N ՍԿ/ԳՀ-1/5298-13 գրությամբ նախագծի լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարություն: Այնուհետև, 2013 թվականի նոյեմբերի 21-ին կայացած մշտապես գործող ֆինանստնտեսագիտական նախարարական կոմիտեի նիստի N 23.16/[178214]-13 արձանագրության հանձնարարականով պահանջվել է լրամշակել նախագիծը հաշվի առնելով ՀՀ Նախագահի</p>
--	--	--	---

			<p>գլխավոր խորհրդական Ա. Ղարիբջանի գրավոր առաջարկությունները: ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՍԿ/ԳՀ-1/6538-13 գրությամբ հայեցակարգի նախագծի լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարություն:</p>
<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	70	<p>«Կենդանական ծագում ունեցող սննդամթերքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել է «Կենդանական ծագման սննդամթերքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը Հայաստանում կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության վերահսկման հզորացում ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակներում ենթարկվել է միջազգային փորձաքննության:</p> <p>Վերը նշված որոշման նախագիծը հնարավոր է շրջանառության մեջ դնել միայն «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրությամբ նախագծի ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվելուց հետո, քանի որ ներկայումս «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո արգելվում է սննդամթերքի անվտանգության ոլորտի պարտադիր պահանջները սահմանել տեխնիկական կանոնակարգերով: Այդ իսկ պատճառով վերը նշված «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրությամբ նախագծով ՀՀ կառավարությանը իրավունք է վերապահվում սննդամթերքի անվտանգության ոլորտի պար-</p>

			<p>տաղիր պահանջները սահմանել կանոնակարգերի միջոցով: Նշվածից ելնելով ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի N 800-Ն որոշմամբ «Կենդանական ծագում ունեցող սննդամթերքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացման ժամկետ է սահմանվել 2013 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակը: Սակայն, հաշվի առնելով, որ օրենքի ընդունումը ձգձգվում է՝ սահմանված կարգով ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՄԿ/ԳՂ-1/6528-13 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի N 800-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագրից հանել 70-րդ կետը:</p>
<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>71</p>	<p>«Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի հունիսի 26-ի N ՄԿ/ԳՂ-1/3336-13 գրությամբ ՀՀ կառավարության քննարկման է ներկայացվել «Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության զարգացման ռազմավարությանը և ռազմավարության իրականացումն ապահովող միջոցա-</p>

			<p>ռումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: ՀՀ վարչապետի 2013 թվականի հուլիսի 12-ի N 02/23.8/10080-13 հանձնարարականով պահանջվել է լրամշակել նախագիծը՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության եզրակացությունը: ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի հուլիսի 31-ի N ՍԿ/ԳՂ-1/3965-13 գրությամբ նախագծի լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարություն: Այնուհետև, ՀՀ վարչապետի 2013 թվականի օգոստոսի 23-ի N 02/23.7/12539-13 հանձնարարականով պահանջվել է ապահովել ՀՀ ֆինանսների և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների, ինչպես նաև ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի կարծիքները նախագծի վերաբերյալ: Վերջիններիս առաջարկությունների հիման վրա լրամշակված տարբերակը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի օգոստոսի 30-ի N ՍԿ/ԳՂ-1/4569-13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն: ՀՀ վարչապետի 2013 թվականի հոկտեմբերի 7-ի N 02/23.8/15021-13 հանձնարարականով պահանջվել է մեկ անգամ ևս լրամշակել որոշման նախագիծը: ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N ՍԿ/ԳՂ-1/5651-13 գրությամբ նախագծի լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ</p>
--	--	--	--

			<p>կառավարություն: Այնուհետև, ՀՀ վարչապետի նոյեմբերի 6-ի N 02/23.8/16876-13 հանձնարարականով պահանջվել է լրամշակել նախագիծը՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության կարծիքը: ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 27-ի N ՄԿ/ԳՂ-1/6286-13 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչությունում կայացած խորհրդակցության արդյունքների հիման վրա լրամշակված ՀՀ կառավարության որոշման նախագիծը:</p>
<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>72</p>	<p>«Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների բրուցելյոզ հիվանդության դեմ պայքարի հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի օգոստոսի 15-ի N ՄԿ/ԱՀ-2/4262-13 գրությամբ ՀՀ կառավարության քննարկման է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների բրուցելյոզ հիվանդության դեմ պայքարի հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Այնուհետև ՀՀ վարչապետի 2013 թվականի օգոստոսի 27-ի N 02/23.8/12809-13 հանձնարարականով պահանջվել է ներկայացնել բրուցելյոզ հիվանդության դեմ պայքարին ուղղված միջոցառումների իրականացման ժամանակացույցը:</p> <p>Արձանագրային որոշման լրամշակված նախագիծը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 18-ի N</p>

			ՄԿ/ԱՀ-2/4883-13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկման:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	73	«Ոչ նպատակային օգտագործվող կամ չօգտագործվող գյուղատնտեսական հողատեսքերի շրջանառության մեջ ներգրավման նպատակային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N ՄԿ/ԱԲ-2/4751-13 գրությամբ ՀՀ կառավարության քննարկման է ներկայացվել «Ոչ նպատակային օգտագործվող կամ չօգտագործվող գյուղատնտեսական հողատեսքերի շրջանառության մեջ ներգրավման նպատակային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: ՀՀ վարչապետի 2013 թվականի հոկտեմբերի 7-ի N02/23.8/15017-13 հանձնարարականով պահանջվել է քննարկել ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության եզրակացությունը և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N ՄԿ/ԱԲ-2/5662-13 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել նախագծի լրամշակված տարբերակը: Այնուհետև, ՀՀ վարչապետի 2013 թվականի դեկտեմբերի 3-ի N02/23.8/18517-13 հանձնարարականով պահանջվել է ներկայացնել չօգտագործվող հողերի գյուղատնտեսական շրջանառության մեջ ընդգրկման տնտեսական հիմնավորումը, որը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N ՄԿ/ԱԲ-2/6717-13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:
ՀՀ գյուղատնտեսության	74	«Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 20-ի N ՄԿ/ԱՇ-1/4938-

նախարարություն		կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	<p>13 գրությամբ ՀՀ կառավարության քննարկման է ներկայացվել «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:</p> <p>ՀՀ վարչապետի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի N 02/23.8/14768-13 հանձնարարականով պահանջվել է նախագիծը ներկայացնել սահմանված կարգով, առաջնորդվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածով, ինչպես նաև համաձայնեցնել այն ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության հետ: ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 30-ի N ՍԿ/ԱՇ/5743-13 գրությամբ նախագծի լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարություն: Այնուհետև, ՀՀ վարչապետի 2013 թվականի նոյեմբերի 13-ի հանձնարարականով պահանջվել է ապահովել նախագծի վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից տրվող կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը: ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 13-ի N ՍԿ/ԱՇ-1/6035-13 գրությամբ նախագիծը ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից տրված եզրակացությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:</p>
ՀՀ գյուղատնտեսության	75	□Հայաստանի Հանրապետությունում զոռնոզների կանխարգելման, սահմանափակման և վերացման միջո-	ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 17-ի N ՍԿ/ԱՀ-2/5573-

<p>նախարարություն</p>		<p>ցառումների մոնիթորինգի մասին՝ ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>13 գրությամբ ՀՀ կառավարության քննարկման է ներկայացվել Ոչայաստանի Հանրապետությունում զոռնոզների կանխարգելման, սահմանափակման և վերացման միջոցառումների մոնիթորինգի կարգը հաստատելու մասին՝ ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:</p> <p>ՀՀ վարչապետի 2013 թվականի նոյեմբերի 8-ի N 02/23.8/17027-13 հանձնարարականով պահանջվել է մեկ անգամ ևս քննարկել նախագիծը ՀՀ առողջապահության նախարարության հետ և ապահովել ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարծիքը:</p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՄԿ/ԱՀ-2/6354-13 գրությամբ ՀՀ կառավարության քննարկման է ներկայացվել Ոչայաստանի Հանրապետությունում զոռնոզների կանխարգելման, սահմանափակման և վերացման միջոցառումների մոնիթորինգի կարգը հաստատելու մասին՝ ՀՀ կառավարության որոշման նախագիծը: ՀՀ վարչապետի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի հանձնարարականով պահանջվել է նախագիծը քննարկել ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության հետ: Քննարկման արդյունքում նախագծի լրամշակված տարբերակը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի</p>
-----------------------	--	---	---

			դեկտեմբերի 23-ի N ՍԿ/ԱՀ-2/6816-13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	76	«Հայաստանի Հանրապետության ձկնաբուծության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 7-ի N ՍԿ/ԱՀ-3/5907-13 գրությամբ ՀՀ կառավարության քննարկման է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության ձկնաբուծության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:</p> <p>ՀՀ վարչապետի 2013 թվականի նոյեմբերի 27-ի N 02/23.15/18175-13 հանձնարարականով պահանջվել է քննարկել ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից արված առաջարկությունները և դրա հիման վրա լրամշակված նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարություն:</p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՍԿ/ԱՀ-3/6684-13 գրությամբ նախագծի լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարություն:</p>

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը
1	2	3	4
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	41	Մննդամթերքի անվտանգության համակարգի կատարելագործում	Մննդամթերքի անվտանգության համակարգի օրենսդրական դաշտի բարելավում և համապատասխանեցում Եվրամիության ընդունված չափանիշներին, այդ նպատակով, մասնավորապես՝ «Հայաստանում կենդանական

			<p>ծագման սննդի և անասնակերի անվտանգության վերահսկման հզորացում» ԹՎինինգ ծրագրի շրջանակներում.</p> <p>- ՀՀ կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության ոլորտի օրենսդրությունը կմոտարկվի ԵՄ-ի համապատասխան օրենսդրությանը</p> <p>ՀՀ վարչապետի 2012 թվականի հոկտեմբերի 15-ի N 995-Ա որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը Եվրամիության՝ սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառների օրենսդրությանը մոտարկման ծրագիրը, որն իրականացվելու է մինչև 2015 թվականը: Միննույն առաջադրանքի իրականացմանը նպաստում է նաև «Հայաստանում կենդանական ծագման սննդամթերքի և անասնակերի անվտանգության վերահսկման հզորացում» ԹՎինինգ ծրագիրը, որը նպատակաուղղված է ԵՄ սննդի անվտանգության օրենսդրության հիման վրա օրենսդրական փոփոխությունների աշխատանքային ծրագրի մշակմանը և իրականացմանը:</p> <p>Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2013 թվականի միջոցառումների շրջանակներում տեղի է ունեցել</p>
--	--	--	--

			<p>ղեկավար կոմիտեի հերթական նիստը, որին մասնակցել են ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ղեկավար կազմը, Եվրամիության պատվիրակության մասնակիցները, ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների և ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ներկայացուցիչները: Նիստի ժամանակ քննարկվել է ինստիտուցիոնալ բարեփոխումների բաղադրիչը, որի ընթացքում գյուղատնտեսության նախարարությունը ներկայացրել է անհրաժեշտ փոփոխությունները, որոնք ուղղված են ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության ոլորտի կառուցվածքային բարեփոխումներին: Առաջարկությունները քննարկվել են ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակներում՝ հոկտեմբեր ամսին փորձագետների կայացած այցի ընթացքում:</p> <p>ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակներում մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Կերերի արտադրությանը, ինչպես նաև կերերի, կերային հավելումների և կենսաբանական ակտիվ նյութերի օգտագործմանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:</p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, ինչպես նաև վերջինիս ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ների անձնակազ-</p>
--	--	--	---

			<p>մերի համար շարունակական վերապատրաստման ծրագրերի կայունության ապահովման նպատակով կազմակերպվել են ուսուցողական այցեր:</p> <p>- մոտարկման արդյունքների հիման վրա կմշակվեն ոլորտը կանոնակարգող գործող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ նախագծեր կամ իրավական նոր ակտերի նախագծեր, այդ թվում՝ Եվրոպական պառլամենտի և Եվրոպական խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի «Կենդանական ծագման սննդամթերքի հիգիենայի առանձնակի պահանջներ սահմանող» N 853/2004 կանոնակարգի հիման վրա կմշակվի «Կենդանական ծագման սննդամթերքի հիգիենային ներկայացվող առանձնակի պահանջների կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը</p> <p>ՀՀ վարչապետի 2012 թվականի հոկտեմբերի 15-ի N 995-Ա որոշմամբ հաստատված ՀՀ օրենսդրությունը Եվրամիության՝ սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառների վերաբերյալ օրենսդրության հետ մոտարկման ծրագրով նախատեսված 183/2003, 767/2009 դիրեկտիվների և 1831/2003, 178/2002, 882/2004 կանոնակարգերի մոտարկման շրջանակներում մշակվել և ներկայացվել են «Կերի մասին», «Անասնաբուժության մասին», «Սննդամթերքի ան-</p>
--	--	--	--

			<p>վտանգության մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ներկայումս գտնվում են քննարկման փուլում:</p> <p>ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 17-ի նիստի թիվ 45 արձանագրային որոշման հավելված 2-ի 9.1 կետի կատարումն ապահովելու նպատակով, ինչպես նաև 183/2003 դիրեկտիվի մոտարկման շրջանակում մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Կերերի արտադրությանը, ինչպես նաև կերերի, կերային հավելումների և կենսաբանական ակտիվ նյութերի օգտագործմանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, մեղրում և մեղվաբուծական մթերքներում մնացորդային քանակների մոնիթորինգի պլանը և հարցաթերթը:</p> <p>38/2008, 1270/2009 և 892/2010 ԵՄ կանոնակարգերի մոտարկման շրջանակներում մշակվել և շահագրգիռ պետական մարմինների քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում կերարտադրության նպատակով օգտագործվող հատուկ նշանակության կերերի և կերային հավելումներ համարվող թույլատրելի, արգելված և մշտական կիրառության որոշ նյութերի ցանկերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:</p> <p>2002/32 ԵՄ դիրեկտիվի մոտարկման շրջա-</p>
--	--	--	---

			<p>նակներում մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Կերարտադրության նպատակով օգտագործվող անցանկալի նյութերի ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:</p> <p>Մշակվել և շահագրգիռ պետական մարմինների քննարկմանն է ուղարկվել «Անասնակերի շուկայահանման և օգտագործման պահանջները սահմանելու մասին կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:</p> <p>Մշակվել և շահագրգիռ պետական մարմինների քննարկմանն է ուղարկվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի «Կենդանական ծագում ունեցող մթերքներում անասնաբուժական դեղամիջոցների առավելագույն մնացորդային քանակները սահմանելու մասին» N 1196-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:</p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ, որոնց մասնակցել են Թվինինգ ծրագրի փորձագետները, նախարարության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ներկայացուցիչները: Հանդի-</p>
--	--	--	---

			<p>պումների ժամանակ քննարկվել է կառավարման մարմինների դերը և պարտականությունները, վերջինիս վերաբերյալ ներկայացվել է եվրոպական լավագույն փորձը, տրամադրվել է սննդամթերքի պետական վերահսկողության ուղղահայաց ստորադասության նկարագիրը: Քննարկվել են նաև Ինստիտուցիոնալ զարգացման ծրագրի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունները, որոնք կամփոփվեն և ծրագիրը կներկայացվի 2013 թվականի դեկտեմբեր ամսվա վերջում:</p> <p>- կարդիականացվեն կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության վերահսկման կարողությունները, գործող ընթացակարգերը և այլն</p> <p>Գյուղատնտեսական կենդանիների, վերամշակումից հետո օգտագործման ենթակա կենդանական ծագման հումքի, մթերքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների ներմուծման փուլում անվտանգության տեսանկյունից վերահսկողությունը բարելավելու նպատակով համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1442-Ն որոշման մեջ (ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 21-ի N 1308-Ն որոշում):</p> <p>Ընդունվել է ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 27-ի «Հայաստանի</p>
--	--	--	--

			<p>Հանրապետությունից Եվրոպական միության երկրներ արտահանվող մեղրին ներկայացվող պահանջները, ինչպես նաև մարդու սպառման համար նախատեսված մեղրի և մեղվաբուծական այլ արտադրանքների արտահանման առողջության սերտիֆիկատ տալու կարգը և առողջության սերտիֆիկատի ձևը հաստատելու մասին» N 1133-Ն որոշումը:</p> <p>Մշակվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի հունիսի 28-ի «Գյուղատնտեսական կենդանիներից փոխանցվող սպունգանման էնցեֆալոպատիայի կանխարգելման, վերահսկման և ոչնչացման միջոցառումների իրականացման հրահանգը հաստատելու մասին» N 376-Ս հրամանը:</p> <p>Մշակման փուլում է գտնվում Հայաստանի Հանրապետությունից արհեստականորեն բուծված ձկնամթերքի՝ Եվրամիության անդամ երկրներ արտահանման գործընթացի նախապայման հանդիսացող «Արհեստականորեն բուծված ձկնամթերքում անցանկալի նյութերի, դեղամիջոցների մնացորդային քանակների վերահսկողության պլանը», որը սահմանված ընթացակարգով և ժամկետներում կներկայացվի Եվրոպական Հանձնաժողովի քննարկմանը:</p> <p>- հանրության շրջանում և մասնավոր հատվածում կբարձրացվի կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության</p>
--	--	--	---

			<p>մասին իրազեկվածության մակարդակը</p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ու հասարակության միջև կապերի ու համագործակցության ամրապնդման նպատակով ծառայության պաշտոնական կայքը մշտապես թարմացվում է: Կայքին կից բացված է ծառայության ֆեյսբուքյան էջը, որը հնարավորություն է տալիս անմիջականորեն ստանալ սննդամթերքի անվտանգության վերաբերյալ հանրության կարծիքը, ապահովել առկա խնդիրների և մարդկանց բողոքների արագ արձագանքումը: Շարունակվում են սննդի անվտանգության վերաբերյալ հանրության իրազեկման մակարդակի բարձրացման աշխատանքները: Յուրաքանչյուր երկուշաբթի ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում տեղադրվում է նախորդ շաբաթվա ընթացքում իրականացված պետական վերահսկողության արդյունքում հայտնաբերված և լաբորատոր փորձաքննության արդյունքի հիման վրա վտանգավոր ճանաչված կամ թերի մակնշմամբ կամ կասկածելի սննդամթերքի վերաբերյալ տեղեկատվությունը:</p> <p>2013 թվականի հոկտեմբերի 30-ին «Էրեբունի պլազա» բիզնես կենտրոնում «Կենդանական ծագման սննդամթերքի և անասնակերի վերահսկողության հզորացում» ԹՎԻՆԻՆԳ ծրագրի հանրային իրազեկվածության բարձրացման բաղադրիչի շրջանակներում</p>
--	--	--	--

			<p>կազմակերպվել է «Դու ինքդ կարող ես կանխել առողջությանդ սպառնացող սննդային ծագում ունեցող վտանգները» խորագրով համաժողով:</p> <p>Տպագրվել են թռուցիկներ, և պատրաստվել բարձր ռիսկային սննդամթերքի վերաբերյալ թվով 6 անիմացիոն տեսահոլովակներ:</p> <p>Թվինինգ ծրագրի շրջանակներում պատրաստվել են տեղեկատվական տեսահոլովակներ, հրատարակվել են արտադրողի և սպառողի համար նախատեսված ուղեցույցեր:</p> <p>Եվրամիության փորձագետների հետ մշակվել է հանրային իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների պլան:</p> <p>- կիրականացվեն միջոցառումներ անասնաբուժական ազգային լաբորատորիայի վերազինման և գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների ու վարակների՝ մասնավորապես, Կենդանիների առողջության միջազգային կազմակերպության (ԿԱՄԿ) կողմից վերահսկվող հիվանդությունների ախտորոշման և մշտադիտարկման մասով վերահսկողություն իրականացնող ռեֆերենտ լաբորատորիայի կարգավիճակ ստանալու ուղղությամբ</p> <p>«Հանրապետական անասնաբուժական, սանիտարական և բուսասանիտարական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ միջազգային ԻՍՈ 17025 ստանդարտին համապատասխան հավատարմագրման գործընթացի նախապատրաստական աշխատանքներն ընթացքի</p>
--	--	--	---

			<p>մեջ են: Պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագրի (CIB) շրջանակներում լաբորատորիան կվերազինվի ժամանակակից սարքավորումներով, որպեսզի հնարավոր լինի ԻՍՈ 17025 միջազգային հավատարմագրմանը համապատասխան փորձաքննություններ անցկացնել:</p> <p>«Հանրապետական անասնաբուժական, սանիտարական և բուսասանիտարական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ միջազգային ISO 17025 ստանդարտին համապատասխան հավատարմագրման գործընթացի նախապատրաստական աշխատանքներն ընթացքի մեջ են:</p>
<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>42</p>	<p>Հանրապետության գյուղական համայնքներում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման շարունակականության ապահովում</p>	<p>- հանրապետության մարզերի գյուղական համայնքներում գյուղատնտեսական կոոպերատիվների անհրաժեշտության և տնտեսավարման տվյալ ձևի առավելությունների վերաբերյալ խորհրդատվության շարունակում</p> <p>«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում հանրապետության 6 մարզի (Արագածոտն, Գեղարքունիք, Լոռի, Շիրակ, Սյունիք, Տավուշ) 67 համայնքում կազմակերպվել է 6-8 հանդիպում՝ ծրագրի մասին տեղեկությունների տրամադրման, կոոպերացիայի գաղափարի և սկզբունքների ներկայացման, «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զար-</p>

			<p>զացման» պլանների մշակման և իրականացման վերաբերյալ:</p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ-ների (ԳԱՄԿ) կողմից սեմինարների և խորհրդատվությունների մատուցման գործընթացում պարբերաբար քննարկվել է գյուղացիական տնտեսությունների խոշորացման թեման, մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում ընկերությունների կողմից կոոպերատիվների ստեղծման թեմայով անցկացվել է 260 սեմինար, սեմինարների ընթացքում քննարկվել է կոոպերատիվների ստեղծման անհրաժեշտությունը, տպագրվել և տարածվել է 35 անուն տեղեկատվական թերթիկ, իրականացվել է 5876 խորհրդատվական միջոցառում:</p> <p>- գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորումը և գործունեությունը խթանող օրենսդրական հիմքերի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների ներկայացում</p> <p>Ներկայումս ՀՀ կառավարությունում քննարկման փուլում է գտնվում «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: «Գյուղատնտեսական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակված է: Վերջինիս համար հիմքեր</p>
--	--	--	---

			<p>ձևավորելու նպատակով մշակվել է «Կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումներ ուղեցույցը Հայաստանի համար», որը ներառում է կոոպերատիվների բնագավառում Հայաստանի և միջազգային օրենսդրությունը, օրենսդրական բարեփոխումների ուղղությունները և այլն: ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչությունում ՀՀ գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման հայեցակարգի նախագծի քննարկման ժամանակ անհրաժեշտ է համարվել օրենսդրական բարեփոխումները կոոպերացիայի բնագավառում սկսել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելուց, ինչպես նաև կոոպերացիայի մասին ՀՀ ընդհանուր օրենքի նախագծի մշակումից հետո, որը պետք է ներառի ոչ միայն գյուղատնտեսության ոլորտը այլ ընդհանուր կոոպերացիայի բնագավառը: Վերջինս միայն ՀՀ գյուղատնտեսության նախարարության խնդիրը չէ:</p> <p>- հանրապետության գյուղական համայնքներում 20 գյուղատնտեսական կոոպերատիվի ստեղծում</p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ-ների (ԳԱՄԿ) և «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի աջակցությամբ Հայաստանի Հանրա-</p>
--	--	--	---

			<p>պետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզերի համայնքներում 2013 թվականին ստեղծվել է 21 գյուղատնտեսական կոոպերատիվ:</p> <p>- գյուղատնտեսության ոլորտում գործող կոոպերատիվների կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումների շարունակում</p> <p>2013 թվականին հանրապետություն է ներկրվել 120 միավոր «ՄՏՁ-8.2» մակնիշի տրակտոր իրենց կից գյուղգործիքներով, որոնք սահմանված կարգով Հայաստանի «ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի միջոցով վաճառվել կամ լիզինգային եղանակով տրամադրվել են կոոպերատիվներին կամ գյուղատնտեսությամբ զբաղվող այլ տնտեսավարող սուբյեկտների:</p> <p>«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում հանրապետության 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) 48 համայնքի «Համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 324 միավոր գյուղտեխնիկա:</p>
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	43	Անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ գյուղական համայնքներին աջակցություն	- հեռագնա արոտների անցանելիության ապահովման, ջրաբքիացման, դեգրադացված արոտների վերականգնման, կաթի ընդունման և վերամշակման կարողությունների ստեղծմանն ուղղված աջակցության

			<p>միջոցառումների իրականացում</p> <p>«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում ՀՀ 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) 65 համայնքում իրականացվում են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները, որից 16-ում դրանք ավարտվել են (42 կմ ջրագիծ, 54 հատ խմոց):</p> <p>Նշված 6 մարզի 55 համայնքի համար ավարտվել են նաև կերահանդակների քարտեզագրման, գնահատման և կենդանիների հերթափոխ արածեցման սխեմաների մշակման աշխատանքները:</p> <p>- համայնքներում ստեղծված արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվների կարողությունների հզորացման միջոցառումների իրականացում</p> <p>ՀՀ 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) 67 համայնքում հիմնադրվել են «Համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ ու «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» հանձնաժողովներ:</p> <p>Տարվա ընթացքում «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի մասին տեղեկությունների տրամադրման, սկզբունքների ներկայացման, կոոպերատիվի գաղափարի ներ-</p>
--	--	--	--

			<p>դրման, «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» պլանների մշակման և իրականացման վերաբերյալ յուրաքանչյուր համայնքում կազմակերպվել է 6-8 հանդիպում:</p> <p>Նշված 6 մարզի 67 համայնքի համար մշակվել և Համաշխարհային Բանկ են ուղարկվել «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» պլանները:</p> <p>48 համայնքի «Համայնքի արոտագտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 324 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 45 կոոպերատիվի տրամադրվել է 66 անիվավոր տրակտոր, 46 կոոպերատիվի՝ 51 մամլիչ-բարդոցիչ և 48 կոոպերատիվի՝ 207 միավոր այլ գյուղագործիքներ:</p> <p>8 համայնքի «Համայնքի արոտագտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվների համար 17 միավոր գյուղտեխնիկան գտնվում է մատակարարման փուլում:</p> <p>- հանրապետության 6 մարզում վերապատրաստված անասնաբույժներով, համապատասխան սարքավորումներով հագեցված անասնաբուժական սպասարկման կենտրոնների ստեղծում</p> <p>«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրով ՀՀ Սյունիքի մարզի Խնձորեսկ և ՀՀ</p>
--	--	--	---

			<p>Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքներում շարունակվում են անասնաբուժական կենտրոնների ստեղծման աշխատանքները: Անասնաբուժական կենտրոնների կառուցման նպատակով իրականացվել են հողի նկատմամբ իրավունքի փոխանցման և շինության նախագծային աշխատանքները: ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում իրականացման փուլում են գտնվում անասնաբուժական սպասարկման կենտրոնի նախագծման աշխատանքները:</p> <p>- խորհրդատվական համակարգի միջոցով նորագույն տեխնոլոգիաների ներդրման, անասնաբուժական և տոհմային աշխատանքների բարելավման միջոցառումների իրականացում</p> <p>Նախատեսված էր ՀՀ 10 մարզում իրականացնել «Տեխնոլոգիաների գնահատման ծրագրեր» (ՏԳԾ)՝ գիտական հաստատությունների կողմից մշակված նորարարական առաջարկությունները ֆերմերային տնտեսություններում փորձարկելու, ցուցադրելու և տարածելու նպատակով: 2013 թվականին ՏԳԾ-ների մասով հաստատված 40 ծրագրերը գտնվում են ավարտման փուլում: Հաջողված ՏԳԾ-ների վերաբերյալ «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» (ԳԱՀԿ) ՓԲԸ-ի կողմից տպագրվել է 46 տեղեկատվական թերթիկ և տրամադրվել ֆերմերային տնտեսություններին:</p>
--	--	--	--

			<p>ՀՀ 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Գեղարքունիք, Տավուշ, Սյունիք) 42 համայնքի ղեկավարների, արտոգտագործողների կոոպերատիվների նախագահների, հաշվապահների, վեճերը լուծող անձանց և կոոպերատիվների անդամների, խորհրդի, կոմիտեի և համայնքապետարանի ներկայացուցիչների համար իրականացվել է ուսուցում՝ արտոգտագործման, կոոպերատիվի բյուջեի կազմման, ֆինանսական հոսքերի կառավարման, հաշվապահական հաշվառման, կոոպերատիվի անդամների իրավունքների ու պարտականությունների, էկոլոգիայի վրա բացասական ազդեցության կանխման և դեգրադացիայի դեմ պայքարի ու արոտների բարելավման, ինչպես նաև բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտի պարզաբանման և այլ թեմաներով:</p>
<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>44</p>	<p>Հայաստանի Հանրապետություն գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծմանն ու հավաքակազմի աստիճանաբար նորացմանն ուղղված աշխատանքների իրականացում</p>	<p>- գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման նպատակով գյուղատնտեսական տեխնիկա մատակարարող լիզինգային ընկերությունների և արտերկրի արտադրողների հետ բանակցությունների վարում</p> <p>Բելառուսի Հանրապետության գյուղատնտեսության և պարենի, արդյունաբերության նախարարությունների, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկա արտադրող ընկերությունների հետ վարված բանակցությունների արդյունքում, ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի N 650-Ն որոշման հիման վրա 2013 թվականին աննախադեպ</p>

			<p>ցածր գներով Հայաստան ներկրվեց գյուղատնտեսական տեխնիկա՝ 120 միավոր «Բելառուս» ՄՏՁ-82.1 մակնիշի տրակտոր իրենց գյուղատնտեսական գործիքներով (կուլտիվատորներ, գութաններ, կարտոֆիլատնկիչներ, կարտոֆիլաքանդիչներ, խոտհնձիչներ, հավաքիչ-մամլիչներ, շարքացաններ): Վերոնշյալ գյուղատնտեսական տեխնիկայի իրացումն իրականացնում է «ՓՄՁ ՋԱԿ» հիմնադրամը և «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպությունը՝ կանխիկ և լիզինգային եղանակով՝ տարեկան 9% տոկոսադրույքով (տրակտորների համար 6 տարի մարման ժամկետով):</p> <p>Գյուղատնտեսական տեխնիկայի ներկրման շարունակականությունն ապահովելու և գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ գյուղացիական տնտեսությունների պահանջարկը բավարարելու նպատակով նախատեսվում է հանրապետություն ներկրել փոքր և մեծ հզորության (80 ձիաուժից ցածր և բարձր) տրակտորներ, հացահատիկային, կերահավաք կոմբայններ և գյուղատնտեսական գործիքներ: Այդ նպատակով բանակցություններ են վարվել սեպտեմբեր ամսին հանրապետություն ժամանած ռուսական «Ռոստսելմաշ» և «Կլներ» ընկերությունների ներկայացուցիչների հետ: Վերջիններիս կողմից էլեկտրոնային փոստով տրամադրվել է տեղեկատվություն՝ պահանջարկ ունեցող գյուղատնտեսական տեխնիկայի տեսականու, տեխ-</p>
--	--	--	---

			<p>նիկական պարամետրերի և գների վերաբերյալ: Համանման տեղեկատվություն է տրամադրել նաև գյուղատնտեսական տեխնիկա արտադրող ռուսական «Դիաս» (ք. Կրասնոդար) ընկերությունը: Կայացած բանակցությունների արդյունքում «Դիաս» ընկերությունը էլեկտրոնային փոստով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի գրությամբ տեղեկացրել է, որ ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ Հայաստանի Հանրապետության համար տրամադրվել է 15%-ի չափով հատուկ զեղչ՝ գյուղատնտեսական տեխնիկայի ամբողջ տեսականու (բացի շարքացանների) նկատմամբ:</p> <p>«Ռոստսելմաշ» ընկերության հետ կայացած բանակցությունների արդյունքում վերջիններիս 2013 թվականի հոկտեմբերի 11-ի գրությամբ Հայաստանի Հանրապետության համար արվել է հատուկ գնային առաջարկ՝ «Նիվա-էֆեկտ» հացահատիկային 50 միավոր կոմբայնի ներկրման դեպքում կտրամադրվի զեղչ 15%-ի չափով:</p> <p>Տրամադրված տեղեկատվության հիման վրա կատարվել է համեմատական գնային վերլուծություն՝ բելառուսական և ռուսական արտադրության համանման գյուղատնտեսական տեխնիկայի վերաբերյալ:</p> <p>Բելառուսի Հանրապետությունից գյուղատնտեսական տեխնիկայի ներկրման շարունակականությունը ապահովելու նպատակով ՀՀ մարզպետարաններից ստացված տեղե-</p>
--	--	--	---

			<p>կատվության հիման վրա ամփոփվել է գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ հանրապետության պահանջարկը, որի հիման վրա ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի N ՍԿ/6456-13 գրությամբ դիմվել է խնդրանքով ՀՀ վարչապետին՝ գյուղատնտեսական տեխնիկայի պահանջարկը բավարարելու նպատակով «ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամին հանձնարարական տալու համար:</p> <p>2013 թվականի հուլիսի 19-ին Պեկինում կայացած առևտրատնտեսական հարցերով հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի 7-րդ նիստի շրջանակներում, հանդիպում է կայացել ՉԺՀ-ի առևտրի պալատի մեքենասարքավորումների և էլեկտրոնային արտահանման-ներմուծման բյուրոյի արտաքին դեպարտամենտում, որին մասնակցել են գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ արտադրող չինական խոշորագույն հինգ ընկերությունների ներկայացուցիչներ (“Foton Lovol”, “Shandong Tiansheng Machinery”, “Chery”, “YTO Group Corp”):</p> <p>Չինաստանում կայացած հանդիպման ընթացքում հայկական կողմը ներկայացրել է գյուղատնտեսական տեխնիկայի և գյուղատնտեսական գործիքներ ձեռք բերելու նկատմամբ հետաքրքրություն և առաջարկել չինական ընկերություններին ներկայացնել այլ-ընտրանքային ֆինանսավորման ճանապարհով վերջիններիս ձեռքբերման և Հայաստան</p>
--	--	--	--

			<p>ներմուծման հնարավոր առաջարկներ:</p> <p>Չինական ընկերությունների ներկայացուցիչները հակիրճ ներկայացրել են իրենց կողմից թողարկվող արտադրանքի տեսականու մասին տեղեկություններ (տպագիր և էլեկտրոնային) և պատրաստակամություն հայտնել ուսումնասիրել երկկողմ համագործակցություն ծավալելու հնարավորությունները:</p> <p>Չինական արտադրության գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ ձեռքբերելու հարցերը էլեկտրոնային նամակագրությամբ առավել ակտիվությամբ քննարկվում են “Foton Lovol” և “Shandong Tiansheng Mashinery” ընկերությունների հետ:</p> <p>Վերջիններս Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը ներկայացրել են տեղեկատվություն արտադրվող գյուղատնտեսական տեխնիկայի՝ մասնավորապես տրակտորների և կոմբայնների տեխնիկական չափանիշների վերաբերյալ:</p> <p>Հետագա հայ-չինական համագործակցությունը շարունակելու և պահանջարկը ճշտելու համար անհրաժեշտ է ստանալ վերը նշված գյուղատնտեսական տեխնիկայի գնային առաջարկները ու ներկրման պայմանները և այդ ուղղությամբ էլեկտրոնային նամակագրություն է իրականացվում վերը նշված չինական ընկերությունների հետ:</p> <p>Գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման հնարավորությունները էլեկտրոնային</p>
--	--	--	--

			<p>նամակագրությամբ քննարկվել են նաև Ռուսիայի Հանրապետության “SC Mecanica” ընկերության հետ: Վերջիններս հայտնել են գյուղատնտեսական տեխնիկա մատակարարելու պատրաստակամություն: ՀՀ գյուղատնտեսության նախարարության հարցմանը ի պատասխան՝ վերջիններս ներկայացրել են իրենց կողմից արտադրվող գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական ցուցանիշների և գների վերաբերյալ տեղեկատվություն, որի հիման վրա կատարվել է համեմատական վերլուծություն:</p> <p>- դրամաշնորհային կարգով գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման հնարավորությունների օգտագործում</p> <p>2013 թվականին դրամաշնորհային կարգով գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման նպատակով Չինական դրամաշնորհի տրամադրման և Ճապոնիայի կառավարության զարգացմանն ուղղված պաշտոնական օգնության ծրագրի (ODA) իրականացման համար կազմված և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի օգոստոսի 24-ի N ՄԿ/ԱՊ-1/4406-13 գրությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն են ներկայացվել համապատասխան տեղեկանքներ և դիմում հայտ:</p> <p>Ճապոնական փոքր և միջին ձեռնարկությունների կողմից թողարկված ապրանքների մատակարարման համար ճապոնական ոչ ծրագրային դրամաշնորհային աջակցություն ստանալու նպատակով սահմանված ձևով</p>
--	--	--	--

			<p>լրացվել և ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2013 թվականի հոկտեմբերի 28-ի N ԱԿ/ԱՊ-1/5711-13 գրությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել համապատասխան հայտի ձև:</p> <p>- օժանդակություն լիզինգային ընկերություններին՝ Հայաստանի Հանրապետությունում ներկայացուցություններ կամ դուստր կազմակերպություններ ստեղծելու, ինչպես նաև ՀՀ-ում գործունեություն ծավալելու գործում, լիզինգային ընկերություններին գյուղատնտեսական տեխնիկայի պահանջարկի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում</p> <p>Հայաստանի Հանրապետությունում «Ռոսագրոլիզինգ» ԲԲԸ-ի ներկայացուցություն կամ դուստր կազմակերպություն ստեղծելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալելու նպատակով ռուսական կողմին առաջարկվել է հարցի դիտարկմանն անդրադառնալ Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության հետ կապված օրենսդրական փոփոխությունները ընդունվելուց հետո:</p> <p>Գյուղատնտեսական տեխնիկայի պահանջարկից ելնելով, համապատասխան գնային առաջարկներ ստանալու նպատակով ռուսական «Կլևեր», «Ռոստսելմաշ» և «Դիաս» ընկերություններին է տրամադրվել համապատասխան տեղեկատվություն՝ անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկայի վերաբերյալ:</p>
--	--	--	---

			<p>- արտերկրի արտադրողների հետ Հայաստանի Հանրապետության մեքենաշինական գործարաններում գյուղատնտեսական տեխնիկայի հավաքման գործընթացը կազմակերպելու հնարավորությունների քննարկում</p> <p>Հայաստանի Հանրապետության մեքենաշինական գործարաններում գյուղատնտեսական տեխնիկայի հավաքման գործընթացը կազմակերպելու նպատակով արտերկրի շահագրգիռ արտադրողներին, մասնավորապես՝ Բոբրոյսկի տրակտորային դետալների և ագրեգատների գործարանին է տրամադրվել Հայաստանի Հանրապետության մեքենաշինական ոլորտի այն ընկերությունների ցանկը, որոնք ունեն գյուղատնտեսական տեխնիկայի հավաքման արտադրություն կազմակերպելու հնարավորություններ:</p> <p>Հայ-Բելառուսական միջկառավարական հանձնաժողովի 10-րդ նիստի արձանագրության 3.2.1 կետի համաձայն Հայաստանում տրակտորների հավաքման արտադրության կազմակերպման համար ձևավորվող աշխատանքային խմբի մեջ ներառելու նպատակով, ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 21-ի N ՄԿ/5585-13 գրությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել երկու աշխատակիցների թեկնածություն:</p> <p>- գյուղացիական տնտեսություններին լիզինգային եղանակով գյուղատնտեսական</p>
--	--	--	--

			<p>տեխնիկա ձեռք բերելու վերաբերյալ համապատասխան տեղեկատվության տրամադրում</p> <p>Գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու խնդրանքով ՀՀ գյուղատնտեսության նախարարություն կամ այլ պետական կառույցի դիմած գյուղացիական տնտեսություններին տրվել են համապատասխան պարզաբանումներ՝ Հայաստանի Հանրապետություն ներկրված և «ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի ու «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպության միջոցով իրականացվող գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգային եղանակով տրամադրման պայմանների վերաբերյալ:</p>
--	--	--	---